Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99
Ъ-66

# ՎԻՊԱՍՔ ԻՄ
Ի
# ՓԱՐԻԶ

ՅԵՐԵՍԱՅ

ՈՍՏԱՆԻԿԻ Տ. ՄԱՐԳԱՐԵԱՆՑ

ԳՐԵԱՑ

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1874

891.99
Շ-66
-6 NOV 2011
35

# ՎԻՇՏՔ ԻՄ Ի ՓԱՐԻԶ

ՑԵՐԵՍԱՑ

ՈՍՏԱՆԻԿԻ ՏԷՐ ՄԱՐԳԱՐԵԱՆՑ

ԳՕՐԻՆԵԱՑ

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

ՎԱՆԵՑԻ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
—
1874

15 JUL 2013

3329

# ՆԱԽԵՐԳԱՆՔ

« Ոչ գիտես զի վաղիւն զինչ
ծնանիցի քեզ ».

Սողոմոն.

Հայրենիք, Ընտանիք, Զաւակ, ասոնք են մարդոյս ամենանուիրական սիրոյ առարկաները, զորս ունեցած եմ ես ալ, որոց նուիրած եմ կեանքս անգամ: Այնչափ սիրեցի զասոնք որ զիրենք երջանկացնելու համար՝ զիս կորուսելու կը մղուէի կրքերէս:

Քալեցի ընդ երկար, լեռներ, ծովեր, թագաւորութիւնները անցրպետեցին մեր մէջը: Վանը, Աննաս, Գայիանէս մնացին յարեւելս, իսկ ես յարեւմուտս յափունս Սենայ:

Աստանօր, ուր շուրջս լի էր երջանկութեամբ, բայց միտս կը ձգէր կը տանէր զիս յետս, ուր Հայրենակիցս Ոստանիկ Փարիզու բաղդին գոհարը գտած էր եւ զիս իւր գտած բաղդովը կը խնամածէր: Կը ցաւիմ որ կորսնցուց ամբողջ գտածը, այն է բաղդն ու պատիւը միանգամայն . . . : Անոր հետ ես ալ իմ յոյսը . . . : Ցաւ չ'պիտի յայտնէի, եթէ յուսոյ կորստեան հետ անձը ալ կորսնցնելու վտանգներ չ'կրէի . . . . . , անձս, որ իմս չէր: Ա՛հ, ես, որ . . . երջանկութիւն պիտի պատրաստէի Հայրենեացս, ընտանեացս եւ զաւ-

կիս. ես կը կորուէի անա՛ . . . . : Աստուած փրկեց զիս եւ նորա հաւատարիմ պաշտօնեայն խնամ տարաւ յիս(*) :

Տեսակիս պարունակութեան մէկ մասը իղձերս են, մէկ մասն ալ վշտախառն արկածներս : Ոչ թէ ես զանոնք գրած եմ, այլ նոքա զիս նկարագրած են. զորս ի լոյս հանելով Ազգիս պատանեաց կը նուիրեմ:

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

(*) Հիւնիեար-պէյ էնտեան Արժանապատիւ Տէր Յովհաննէս Հայրը երկիցս ի բանտն իմ գալով՝ զիս թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս մխիթարեց. եւ ի Պոլիս վերադառնալու համար անձնական պիտոյիցս մեծ հոգ տարաւ, առ որ շնորհ շատ ունիմ երախտապարտ սրտիւ ;

ՆՈՑՆ

# ՎԻՇՏՔ ԻՄ

## Ի ՓԱՐԻԶ

ՑԵՐԵՍԱՑ

## ՈՍՏԱՆԻԿԻ Տ. ՄԱՐԳԱՐԵԱՆՑ

### Ի ՊԱՐՏԻԶԻՆ ԹԻՒԵՅԼՐՈՒԻ

1. Տըխուր սրտով յուսահատած միայնիկ
Ծառի մը տակ նըստած՝ օրերս յիշէի,
Ո՛հ այն օրերը որ մանկութեանըս փափկիկ,
Կ'սնուցանէր կեանքն անմեղ յիւր ծոցիկ :

2. Շուք պարտիզին և պերճութիւնք իւր շինից,
Չ'ամոքեցին երբէք սիրտըս տըխրալից.
Ալիքն Սենայ յիմ խառնեցան արտասուս,
Չ'հարցին երբէք թէ'նդէր է ինձ այսքան սուգ :

3. Այո՛, Թող յիմ աչաց հոսեն բիւր կայլակք,
Կայլակք՝ ոյց շինք աղի և խիստ դառնորակք,
Թող սուգ պատէ սիրտս ոյր ցաւերն խիստ շատ են,
Ցաւք՝ որ զԹշուառս յիւրն Հայրենեաց անջատեն :

4. Ա՛խ Հայրենիք, դու տառապեալ աշխարհ մեր,
Աշխարհ փառաց երբեմն, իսկ այժմ խիստ աւեր,
Ե՞րբ ժողովես ի ծոց քոյին մայրական,
Զորդիսդ ցրուեալ յաշխարհ օտար ա՛անբնական :

5. Զայն տուէք ինձ, ով դուք Թռչնեակք երկնասլաց,
Եւ դու ծիծառն զուշակ գարնան ա՛աւուրց ջեր,
Եւ դու լուսին շրքեղ դշխոյ աստեղաց,
Ո՛հ, ասացէք, զիմրդ զբտանի աշխարհ մեր :

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

20 յունիս, 1873. Փարիզ.

## ԸՆԿԵՐ

1. Ո՛վ քաղցր անուն, պարգև բարի աստուածեան,
Նախ ի դրախտին տուեալ օճան մարդկութեան,
Ըզքեզ որ Էնն ընկեր անուն յորջորջեաց,
Եւ օգնական մենիկ մարդոյն ընծայեաց :

2. Բայց դըժխեմ բաղդ, զինչ սատանայ անպատկառ,
Միշտ ըզնոյն զօդ խամրէ սիրոյ փըրկարար.
Համայն ուրեք սիուեալ զաւերսն իւր անշուք,
Եւ ինըմա հեծեծանք դառն ե՛արտասուք :

3. Բաբէ, որ քան սէր անասնոց առ ընկերն,
Եւ որ քան իղձ երախտագէտ առ իւր տէրն,
Որ յանջատիլն յողորմ հարեալ արտասուք,
Ջ'Թողուլ կամի, բայց բաժանեն ձեռք անզութք :

4. Մի Թէ և մարդն նումստ ե՛ըստոր քան զանբանս,
Կըրէ զզացմունս որ վայելէ մարդկութեանս,
Ո՞չ սա ստեղծաւ ընկերական ի սկըզբան,
Լինել սատար առ ընկերն իւր ի նեղութեան :

5. Ո՛չ, չէ կեանքն, կեանք խաղաղ ե՛անընկեր,
Եւ ոչ հոգին զոր Տէրն ըստեղծ յիւր պատկերն,
Որպէս ծաղիկ որ առանց լոյս և անջուր,
Այսպէս Թոշնի սիրտն անընկեր իկեանսն իւր :

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

22 յունիս, 1873. Փարիզ.

---

## ՅԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՍՏՐՆ ԻՄ

## ԳԱՑԻԱՆԷ

1. Ո՛հ, ես ի տար տարաբաղդիկ ի յաշխարհ,
Դուստր իմ, յորժամ դու ի հայրենիս քո ծընար,
Ոչ զառաջին լուայ ըզքո քաղցր բարբառ,
Եւ ոչ ըզքոյդ տեսի զարտասրն և զաշխար:
Վասն այն այս է ցաւոցս սայր :

2. Հանգիր ի գիրկն մօրդ դիեցիկ, ո՛հ, դուստր իմ,
Մինչև լըցցի Թիւ հոր քոյին ոսերիմ,
Զի դու դժբաղդ դուստր մի դժբաղդ միոյ հօր,
Որ յիւրն կեանս չ'ետես զուարթ զէթ մի օր :
Ո՛հ մինչ ցերբ է ինձ այս օր :

3. Քեզ հովանի զուԹ մայրենի լիցի ո՛հ,
Հրեշտակք անմեղ տարցեն սպաս իբր ծընօղ,
Թէ պակասի զորոնն ի քեզ դժբաղդ հօրդ,
Երկինք ըզնոյն ակնարկն արկցէ զքև զըԹոտ :
ԵԹԷ ունի երկինք ըզզուԹն այն ուղղորդ:

4. Ցորորոցիդ մինչ կապկապած բառնաս ճիչ,
Եւ մինչ մեղոյշ աչերդ փակին յանոյշ նինջ,
Ո՛հ, յերազիդ, Գայիանէ, տես ըզհայրդ,
ԵԹԷ երազն ըստոյգ և իմն է աշխարհ :
Զստոյգն և ինձ ո՛հ, ո՛ տայր:

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

26 յուլիս, 1873. Փարիզ.

---

## Ի ՁԸՌԻԿ ԱՂԲԻՒՐՆ

## ՎԱՐԱԳԱՑ

1. Ի բարձրաբերձ դարեւանդէդ Թաւալգլոր,
ԺայԹեն ալիքդ գըլեալ յուշիկ ի ըստոր,
Կարկաչասահ յառուս առուս բաժանեալ,
Ի մարգս ի Թուփս խիտ մացառաց սողոսկեալ :

2. Հովիւքն ընդհատս անմեղ զառանց ընդ եզերսդ,
Գան տաւաղել յարեգական նեղեալ ջերս,
Եւ բազմազան բոյլք Թըռչնեկաց քաղցրախօս,
Ի հովանուդ ծերպսդ դադարին ի զբօս :

3. Ո՛հ, և իմ աստ զարթնու յուշիկ մանկութեանս,
Որ ընկերօքս ելեալ երբեմն յուխտ խաչին,
Նախ առուակիդ առ ափն նըստեալ սըրբութեան,
Տայաք հանգիստ անձանց խոնջեալ յալեացդ ջինջ :

4. Իսկ այժմ իքէն կամ հեռացեալ ով դու վայր,
Եւ դու սիրուն Զըռիկ աղբիւր ի ջուր սառ.
Գիտեմ ալիքդ պըղտոր զընան դէպ ի ծով,
Իբրև ըզսիրտ պանդըխտելոյս լի սըզով :

5. Ո՛հ, մի՛ Զըռիկ, մի՛ դու այդպէս տըխրացին,
Եւ մի՛ զալիսդ յալիս զեղոյր լալագին,
Քանի ապրին մանկունք Հայոց Վասպուրեան.
Քանի ալիքդ վէտ վէտ ի քեզ կան ծըփան,
Քանի և իմ սիրտս ի հեռուն Թըրթըռայ,
Քանի և շուք խաչին ի Քեզ հովանայ,
Ի՛հ, տակաւին Քեզ շատ երկայն կեանք կայ :

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

25 յունիս, 1873. Փարիզ.

## ԱՐՏԱՍՈՒՔ ԻՄ Ի ՇԻՐԻՄՆ ԼԵՒՈՆԻ ԶՊԻ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ԴԺԲԱՂԴ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՅՈՑ

## ՈՐ Ի ՍԷՆ ՏԸՆԻ

*Վախճանեալ ի Փարիզ· 1393 ի 22 Նոյեմբեր·*

1. Ա՛հ, Թողէք որ զըրկեմ այս քարը և համբուրեմ ջերմիկ սրտով.
Թողէք որ Թանամ զոսկերսն աղբերբն աչացս Թագաւորիս.
Թողէք որ բանամ սըրտիս ցաւոց Թերթերն որ ընթեռնու,
Թողէք որ արթընցնեմ այս քընացողն չորեքդարեան :

2. Ելիր, ձայն տուր, քու սիրելի Հայաստանէն կուգամ Քեզ յուխտ.
Ո՛չ Թէ Քեզ դրօշ յաղթութեան կամ աւետիս բերեմ ընծայ,
Այլ սուգ և լաց, աւար ու աւեր զերեզմանիդ սըփռեմ յոլորտս.
Զի այն ամէն դու ընդ Քեզ տարար փակել շիրմիդ ի խոր :



3. Ելիր, դուռ երբեմն միջնորդ էիր խաղաղութեան առ ազգս օտար,
Զըլանաս տալ այժմ ազգիդ քում ըզխաղաղութիւնն այն փրկարար.
Ե՛լ ու տես Թ՝ինչպէս ցրուեալ ու պառակտեալ կըսփեն զիրեարս,
Որք աւելի քան զԹշնամին ինքեանք զինքեանըս խոշտանգեն :

4. Ե՛լ, մի Թէ չես խըղճար դու յիս որ առ երի զերեզմանիդ,
Զեռնիկս իծոց, զըլխիկս իկոր, աչերս լըցուած դառն արցունքով,
Ի զուսս անկեալ կը պաղատիմ ահ, զամ մի ևս շարժեա զմականդ,
Զի առցէ ի շարժմանէդ կրկին կեանս խեղճ Հայաստան :

ՁԱՅՆ

5. «Դընա, պառանի դու, և մի զանդորրն զերեզմանիս իզուր խռովեր»
«Զի դառնալից բաժակն Հայուն դեռ չէ հասեալ յատակ մըրին.»
«Եւ այս զըլուխն իմ վշտակոծ որ ընդ օտար դընի հողվս,»
«Մի՛ բաձրասցի ի Թագն իւր՝ մինչ չև տեսցէ Հայն միացեալ . . . . :»

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

21 յուլիս, 1873. Փարիզ.

## Ա. Ռ

## ՏԱՐԱԲԱՂԴ ԱՄՈՒՍԻՆՆ ԻՄ ԱՆՆԱ

1. Հեռու եմ, Աննա, ի քէն և ի սիրոյդ տարփելի,
Ոյր ի կարօտ վառի սիրտ իմ և ոյր ի բոց իմ հոգի,
Դու արևելք, ես արևմուտ, երկուքնիս ալ տարաբաղդ,
Խամրի այսպէս մերկեանքն քաղցր իբրև զարնան վերջին վարդ:

2. Ի՞նչ երջանիկ ժամ էր այն օր սուրբ սեղանոյն առաջի,
Ա՛հ, երբ դու ձեռքդ ինձ խոստացար լինել ի միմեանց անմեկին,
Ուխտ մըն էր այս զոր ուխտեցինք, նշան սիրոյ միութեան,
Զը բաժնուիլ մինչև այն կէտ՝ ուստի բաժնէ զերեզման :

3. Ա՛հ, դեռ լուսին չէր բոլորած զվեցերորդն իւր շրջան,
Երբ հիմնեան զունեղ նարօտ մեր փողփողէր ըզ զըլխով,
Խըլեցին զքեզ զըրկէս և բաժնեցին պսակդ զըլխէս,
Զինչ շուշան արմատախիլ և զինչ վարդեր վարդենիսէն :

4. Հեռու եմ, Աննա, ի քէն և ի դիմացդ գեղանի,
Որ զինչ պարտէզ ծաղկանց զուարթ առ իս ժպտէր հոլանի,
Ո՜հ ծածկեցաւ յիմոց աչացս Թշուառութեան մըթին ամպով,
Իբրև լուսին յերկնից կամար որ սեաւ ծածկի ամպոց քողով:

5. Հեռու եմ Աննա, ի քէն և յանդրանկէս իմ նորածին,
Զոր դու իգիրկդ բարձեալ զբզուես իսկ ինձ անտի չիք բաժին,
Ինձ բաժին ասա հեծեծել և ճակատիլ ընդ դէմ բաղդիս,
Եւ այրիլ սիրոյդ ի հուր մինչև ցշունչն իմ յետին:

6. Հեռու եմ Աննա, ի քէն և դրստերէս նորածին,
Այր չտեսի զխանձարուրն և ոչ զհամբոյրն առաջին
Քաղեցի յայտիցն բընքոյշ, նշան սիրոյ կաթոգին,
Ա՜հ, իմ և քոյդ այս էր, Աննա, բաղձանքըն սուրբ և յետին:

ՆՇԱՆ Ա. ԵՒՐՎԱՆԵԱՆ

22 յուլիս, 1873. Փարիզ.

## ԺԱՄԱՅՈՅՑ

1. Մէն մի հարուածդ առ քեզ զաչս իմ ձգեն, ժամ,
Թէ մի՞ լիցի կենացս յետին է այս ժամ.
Դու երջանկին միշտ ի յուրախ հընչես ժամ
Ապերջանկին տըխուր երգես յարաժամ:

2. Կեանքն է ժամ, ժամն է կեանք
Երկուքըն ևս յողդողդուն,
Երբեմն տըխուր երբեմն ուրախ,
Ցանկարծ նընչեն մահուն քուն:

3. Ահա հընչեաց նորէն մի ժամ,
Մեր սին կենաց ձայնատուն,
Թ'ահան Թըռեաւ մաս մ'ևս կենաց
Եւ օրն եղև իրիկուն:



4. Յարևելից մինչ յարևմուտս ընդ ամէն,
Երկոտասան դու արեգին հաշուես քայլ,
Իսկ մնացեալ երկոտասան գիշերին,
Տըխուր ծածկես զՏիեզերս ընդ մըռայլ:

5. Դառնայ արեգն և քոյդ հընչեն մի նոյն ժամ
Եւ բնութիւն ի նոյն կանխէ յարաժամ,
Բայց մահացուին չիք դարձ և ոչ լսի ձայն
Է՜հ, վա՜հ, յաւիտենից լուր դու զնորայն արձագանգ:

ՆՇԱՆ Ա. ԵՒՐՎԱՆԵԱՆ

16 օգոստոս, 1873. Փարիզ.

## Ի ԾԱՂԻԿՆ ՄԱՐԳԱՐԻՏ

## ԶՈՐ ՏԵՍԻ Ի ՎԱՃԱՌԱՆՈՅԻ ԾԱՂԿԱՆՑ

Ո՜հ, զքեզ կ'ճանչնամ ես Թէ մէջ բիւր ծաղկանց Թագչիս,
Ո՜հ, զքեզ կը սիրեմ ես Թէ վարդ գափուռն ալ նախանձի:

Վարդն պիւլպիւլին է հայրենիք տեսքովն սիրուն հոտովն անոյշ,
Իսկ ես քոյդ եմ սիրահար սիրոյդ կրակովն հալուած մաշուած,
Ըսէ ինձ իմ սիրունիկս, և մի ծածկեր յինէն զզաղտնիսդ,
Ես Հայաստան տեսայ զքեզ խիստ գեղեցիկ կայտառ գունեղ
Ի մէջ ծաղկանց իբր Թագուհի կայտըռէիր դու նազելով,
Ո՞ր ձեռն անգութ զքեզ այսր խլեալ տընկեց ի վաճառում:

«Գերի եմ ի ձեռս մարդկանց և տարագիր հովտացս սիրուն,
«Զիս Տէրն ի զարդ հովտաց ստեղծ և ետ բնութեան պարգև չըքնաղ
«Իսկ մարդիկ՝ ձեռամբ հուպ ինձ մատեան կորզել ի բնիկ հողոյս
«Ա՜հ, այժմ աստէն կորուսի ըզսովորոյթ բնիկ բնութեանս
«Առ ոտն ճըմլեն փափուկ Թերթերս որ դադար էր Թռչնոց Թեթև
«Եւ ջանասէր մեղուացըն պարք յինէն զհիւթ զային տանել:

Ո՜հ, դուն ալ, տունկդ դժբաղդ, դուն ալ ինձ պէս արտահալած
Քու բնիկ հայրենիքդ՝ օտար հողոյն վրայ հանգչիս,
Զուրկ յուղիչ սառնանման և յաղբերաց ջինջ վտակաց

Որք սահեալ անցանէին զպասուք սրտիս զովացուցեալ,
Ի մարմանդս դալարազեղ սողոսկելով անցանէին :

Իսկ արդ ահ, մարդոյն մնաս ըստ կամաց իւր ջամբել քեզ զայն
Եւ այն իսկ եթէ լինէր ի վտակացն այն զբղբղուն,
Զոր բնութիւն անխտիր շրռայլէ առատ պասքեալ սրտից,
Իսկ դու աստ բաւանաս ջուրցն ցընցղաւ կապարակազմ,
Որ ոչ թէ կեանս պարգևէ, այլ մահ սրփռէ թերթիցդ վերայ :

Այո, դուն ալ ինձ պէս դրժբաղդ,
Գերի ինկար յերկիր օտար,
Ծընգած, ցամքած տերևաթափ
Զունիս անկմանդ նեցուկ սատար :

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

18 oqnusnu, 1873. Փարիզ.

## Ի ԼԵԶՈՒՆ ՇԱՏԱԽՑԻՈՑՆ

## ՎԱՆԱՑ

1. Սիրեմ Ձեր լեզուն բարբառ Մայրենի
Արմատ իսկական հայկական լեզուի,
Որ պահէք մինչ ցարդ ի Ձեր հազագի
զՈճն և զկարգն բանից յիւրումն ի տեղի :

2. Թող բանասէրներ Ձեր մէջն փընտրեն
Անոյշ ասացուածք և ընտիր ձևեր,
Թող բանաստեղծներ Ձեզմէ ուսանին
Սիրոյ զողտր երգեր ինչպէս յօրինել :

3. Ահա օրինակ տամ ընթերցողին
Սոյն այս բանի տող պարզ Շատախցիին,
Որ սիրով ուղղէ առ իւր սիրուհին
Երթալ զինքն տեսնել Սուրբ Վարդավառին :

«Եար հայ նա ծէթիկ մէթիկ աստղեր
«Եար հայ զըմէն անեմ ծի կոճակ,



«Եար հայ պախեմ չում վարտէվէրին
«Եար հայ տանեմ եարոջս տիարին (1):

Եւ թէ

«Ո՞վն ա տեսեր մէկ ծոմն երկու թէավիւր (2)
«Ըսպիտակն է առեր սև ջուրն ի մէջ իւր,
«Կը զարնէր քամին ջրրեր չրր խառուե հիրիւր (3)
«Աստուած կը սիրէք մըք էլնե խօրօտ կընկեան բեավիւր (4)
«Ա՜խ խօրօտ կին մարդոյն բերէ զտունն ի փիլ :

4. Տես, ով բանաստեղծ և դու բանասէր
Տես Շատախցիին այս սիրուն տողեր,
Կարդա զմայլմամբ Հայու հոգիով
զՏողսն Շատախցւոյն որ լի է ոգւով :

5. Խեղճ է Հայաստան Հայուն հայրենիք
Հայուն պէտք է ողբ, այլ չև է հերիք,
Թէ և ցարդ պահի լեզուն ա՛զգութիւն,
Բայց չէ նոցա մէջ սէրն և միութիւն :

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

30 oqnusnu, 1873. Փարիզ.

## ԲՆԱՐ ՊԱՆԴԽՏԻՆ

1. Բնարը լռեր է, թելերն բեկբեկած
Վրշտերն երգելու պանդխտին Թշուառ,
Ձայն, խուլ արձագանգ տայ սրգով պատած
Սրտին սևաթոյր ի բոց հրրավառ :

(1) Տիարի. ընծայ, նուէր :
(2) Թավիւր. գոյն, տեսակ :
(3) Հիրիւր. իրարու :
(4) Բեավիւր. կընքահայր :

2. Ո՜հ, չէր իմ Քնարն այսքան լուռ և մունջ
Որ կենդանութիւն տայր դիոցն անշունչ,
Մէն մի իւր թելերն թրրթրռար թեթև
Պանդըխտին երգել զվշտացն մըրմունջ :

3. Քընարդ իմ փըշրած, հաւասար սըրտիս,
Տուր ինձ պատասխան եթէ սիրես զիս,
Երգէ նուագ մ'ևս թելերովդ տըխրած
Թըշուառ պանդըխտին կեանքըն մաշած :

4. Դու ես պանդըխտին, Քնար, միակ յոյս,
Դու միայն ազդես ձայնդ ի մէջ հոգւոյս,
Թէ մի թելդ կըտրի կապուած սըրտիս հետ,
Բըրթի սիրտս ամէն և զայ քո ըզհետ :

5. Լըռեր է Քընարն պանդըխտին տըխուր
Զըտար պատասխան վըշտացըն բիւր,
Երկինք, դու ի Քընարս զեղ ձայն քաղցր և շունչ
Ի շունչն այն հանից առ Քեզ զիմ մըրմունջ :

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

1 սեպտեմբեր, 1873. Փարիզ.

## ԽՈԿՄՈՒՆՔ

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

1. Զինչ ծով ծըփանուտ է սիրտն ու հոգին
Վշտով պաշարուած հայրենասիրին,
Խոկայ ի միտսն իւր տեսնել զայն ամէն
Ինչ որ հայրենեաց փառք ու պարծանք են :

2. Ոչ տունն իւր է տուն և ոչ կինն է կին,
Ոչ փառք ու հանգիստ խընդրէ իւր անձին,
Գիշերներ անքուն, ցերեկն է անտուն,
Մորմոքի այսպէս հայրենեաց սիրուն :



3. Երբ տեսնէ փառքերն օտարին փայլուն
Իսկ իւր հայրենեացն շիջեալ ու խաւար,
Լինի անհանգիստ յանձն իւր օրն ի բուն,
Հայրենեաց կարդայ աւաղ անդադար :

4. Հայրենասիրին քաղցր է բնութիւնն,
Սըրտիւն է անկեղծ, մտօքն է արթուն,
Զ'կամի ընկերին խէթ խարդախութիւն
Եւ ոչ հայրենեաց վատ ըստրկութիւն :

5. Մեռնիլն իւր պարծանք՝ մահն միայն իւր փառք
Միայն թէ տեսնէ լեցուած իւր փափագ.
Այսինքն տեսանել հայրենիք պայծառ
Հասած ճըշմարիտ փառացն ի կատար :

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

10 սեպտեմբեր, 1873. Փարիզ.

## Ի ՇԻՐԻՄՆ

## ՆԵՐՍԻՍԻ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԱՇՏԱՐԱԿԵՑԻՈՑ

ԱԶԳԱՍԷՐ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

## Ս.ՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*Վախճանեալ ի 13 Փետրվար, 1857 ամի Փրկչին.*
*14 ամ շեալ Կաթուղիկոս.*

Վէմ ցուրտ, կոփեալ քարանց ի ձեռն ցուրտ
Որ զաճիւնսըն մեծի առն ամփոփես ի ծոցդ տըխուր,
Ընկալ զիմ արտասուս իբրը նուէր որդիական
Առ Հայրըն Հայրենեաց և պաշտպան հայկազարմից :

Սուգ ի Մասիս, սուգ ի Յեփրատ, սուգ յԱյրարատ,
Եւ սուգ ի սիրտ համայն Հայոց հարազատաց,
Զի մերկացան ի փառացն հօրն Հայաստանեայց
Զի ընդ նմա յաջորդեցին որդիք յուրաստ :

Անէծք ձեռացըն տիրադրուժ և ապերախտ,
Անէծք սրբտին որ ի ժամուն ոչ բաբախեաց,
Անէծք ոտիցն ընթանալեաց ե՛անպատկառոտ,
Որ ժըպրհեաց կորզել զկեանսն հասարակաց :

Ի վեր կալ ըզգլուխըդ վեհ, տես, ո՛ բազմի յաթոռըդ սուրբ
Աթոռ զոր այնչափ անչափ ճըգամբ փառազարդեաց ձեռնքոարի
Այժմ ո՛հ, կայ խըրթնացեալ ի բարեզարդ նախկին շքոյն
Զի նախանձու վըրիժապարտ ձեռն ի նմա հպաւ անգութ :

Ո՛հ, որպիսի խեռ թըշնամին իշխեաց փըշրել բազուկսըն այն
Որ միովըն սուր բարձեալ ընդ ոսոխին զայր ի վրսեր,
Եւ միւսովն մաճ ի ձեռին զանդան հայրենեացըն մըշակէր,
Իսկ մըտացըն լրծակաւ զաշխարհ համայն ի մի կըշռէր :

Շընորհք աստ ապաշընորհաց, որ այս չափս ևս ոչ զըլացան
Տալ անմահ անուան նորին զարժանաւոր մակդիրըն այն,
« Պաշտպան Հայրենեաց », և հայր զթոտ հասարակաց,
Զի 'նքեանք սպանին զայն՝ պարտէր նոցա զնոյն զարդարել:

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

21 մայիս, 1872. յէջմիածին.

---

## ԻՄ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

## ԵՒ ԲԱՆՏԵՐՍ

Նշան Աւետիս ցեղէն Շիրվանեան
Ուստրը Աղմամու Ղարասէֆէրեան,
Հազար ութհարիւր քառսուն թուական
Մերոյս սուրբ Փըրկչին ծընայ ես ի Վան :
Ցետ երեք ամաց ծընողքն իմ մեռան
Թողին զիս խեղճ, որբ ի խընամս Աստուածեան :

Մինչև ի հասակն իմոյ տասնամեան
Սընայ ես ի զիրկն Հանուոյս ժըրաջան,

3058



Մեռաւ և Հանիս ի յայս թուական,
Մնացի անպաշտպան մինչ հնգետասան :
Ի հընգետասան ամեայ հասակիս
Գաղթեցայ շըքեղ յաշխարհն Բիւզանդեան,
Անդ գրէթէ ութն ամ աշխատեալ ուսման
Գանձեցի ի միտս լեզուս զանազան,
Հայ, Պարսիկ և Թուրք, Արապ և Անգլեան :

Հազար ութ հարիւր վաթսուն և ընին
Ցեւրոպ, Ասիա ե՛Ամերիք ինքնեն,
Շըրջեցայ շահել արհեստ շահեկան,
Բայց ի զուր ամէնն զի չ'զոյր նիւթական
Ցուսահատելով դարձայ ես ի Վան :

Անդ ամուսնացայ ընդ օրիորդին
Աննա նազելւոյ դուստր Գանտօեան,
Ցետ չորեքտասան ամսոցըն լըրման
Տէր ետ դըստրիկ մի յանուն Գայիեան
Տէր, դու պահեա զայն անփորձ ե՛անսասան :

Երբ աչօքս տեսայ զաւերսն Հայրենեացս
Ցաւերսն այն սիրտ իմ վեր ի վայր թընդաց,
Եւ յորժամ լուայ թէ իմ բարեկամ
Ի հեռուստ յիշեաց զուխտն իւր սրբազան,
Թողի զամուսինս և զիմ զերդաստան
Կրկին Բիւզանդեան կալայ զպողոտայն :

Երթալ ի Փարիզ առ իմս բարեկամ
Որ հեռազրած էր առ Վեհ Սրբազան(*),
Առ ինքն առաքել զՆշան Շիրվանեան
Ըզծախսսն ուղղոյն առաքեալ համայն :

Ոստանիկ Մարգար թոռն տէր Մարգարեան
Ուստրը Սանդըխտոյ, որդի Մեսրոպայ,
Հազար ութ հարիւր քառսուն և վեցին
Մերոյս սուրբ Փըրկչին ծընաւ նա ի Վան :

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. ՊՈՄԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI-1922
Հ. ՄԱՅԱՆԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

(*) Խրիմեան Հայրիկ :

Հազար ութ հարիւր վաթսուն երեքին
Ոստանիկ Վանէն Պոլիս ղըրկեցին,
Ուր երկու տարի ընդ պաշտպանութեամբ
Վանեցւոց, ուսաւ լեզուն հայկական :

Հազար ութ հարիւր վաթսուն և հինգին
Շնորհիւ Խրիմեան Հօր և Քեաթիպեանին,
Վանեցիք ճամբու ծախքըն շընորհեցին
Ոստանիկ Փարիզ քաղաք ղըրկեցին :

Այն տեղ Մուրատեան մտաւ վարժարան
Ուր աշխատեցաւ երկու ամ ուսման,
Յետ երկուց ամաց չ'տոկալով զեղծման
Ապաւինեցաւ ցՀիւնքեար—Պէյէնտեան :

Սոյն այս միջոցիս Մեծն Աղաթոնեան
Գրիգոր էֆէնտի Հայազուն իշխան,
Ընդ միջնորդութեամբ Հիւնքեար—Պէյէնտեան
Յանձնեաց զՈստանիկ ցՄեծ Նուպարեան :

Շնորհիւ Վեհազուն Մեծի Նուպարեան
Մարգար Ռօլէնեան եմուտ վարժարան,
Ուր շարունակեալ ութն ամիս միայն
Անտի Կրինեանի մուտ Համալսարան :

Մինչ եօթանասուն անդ շարունակեց
Ուր ուսման ընթացքն քաջիկ աւարտեց,
Բայց երբ Գաղղիոյ բըրթաւ պատերազմ
Ամէն բան ցըրուեց ի հեռուն տարաւ :

Մեկնեցաւ անտի գընալ ի Լօնտօն՝
Ընդ Հայր Սարգսի Թէոդոր ըզգօն,
Ըսպասել ելիցն այն պատերազմին
Որ աղէտ բերաւ զեղեցիկ երկրին :

Երբ խաղաղութիւն մըտաւ Գաղղիայ
Մարգար ընդ նըմին մուտ գործեց ի նա,



Ո՞ւր պէտք էր երթալ կամ ուր տեղ օթել,
Բայց ի յանուանին շըքեղ Կրանտ—Օթել :

Այս տեղ կըսկսի Ոստանիկն փայլիլ
Իբրև Հայ իշխան մ' Կրանտ—Օթել բազմիլ,
Իւր հարըստութեան չ'գիտէր ոք աղբիւրն
Բաց իրմէ և իւր գրութիւնքըն բիւր :

Ոստանիկ չունէր գէշ մի նըպատակ
Եւ ոչ մըսխածներն էր արդար վաստակ,
Բայց միայն ունէր երկու նըպատակ
Որով տի հասնէր իւր փառացն ի ծագ :

ԱՂՋԻԿՆ ԵՒ ՊԱՇՏՕՆ. ԱՅՍ ԷՐ ԻՒՐ ՓԱՓԱԳՆ

---

Հազար ութ հարիւր եօթանասներկու
Ի յերկոտասան նոյեմբեր ամսոյ,
Մտայ ի Փարիզ ի տուն Մարգարեան,
Օ՜հ, ինչ փառք և ինչ շըքեղ պերճութիւն
Ընդ չորս կողմ փայլէր հոծ հարըստութիւն,
Ծառայք, աղախնեայք, կառավարքն ամէն
Ջերկինքս Թողեալ զերկիր պագանեն,
Մեծամեծ որեարք բարձր աւազանիք
Գիշեր և ցերեկ մուտս և ելս առնեն,
Յորժամ զուգաձի ի կառս ելանէր
Տեսնող մատնանիշ զնա երանէր :

Բայց լոյս խարդախին մինչ ցըկէս գիշեր
Հազիւ փայլիլի և այն մութ ի ստուեր :

Եհաս ժամանակ մեկնեցաւ յանկարծ
Իւր հետ տանելով ըզգաղտնիսն անթափանց,
Փոխան իւր եթող զնշան Շիրվանեան
Անզութ զազանաց և գայլոց բերան :

Յետ երկուց ամսոց պատառեցաւ քօղն,
Բըրթեցաւ պատիր հարստութեան օղն,

Խաբողն յերևան ելաւ. նոյն ինքն զող
Զգեց խեղճ Նշան փորձանացն ի բով,
Զի կասկածեցան թէ էր նա իւր քովն
Անշուշտ գիտէ թէ ով է զայն ուտողն :

Յորժամ նա կրկին դարձաւ ի Փարիզ,
Կամեցաւ ծածկել զիւր ամէն չարիսն,
Բայց որով, ինչպէս և ինչ կերպերով,
Զը գիտէր ոչ ոք, բայց մէկը կար իր քով . . . . : (¹)

Հազար ութ հարիւր եօթանասն երեք
Տասն նոյեմբերի ամսեան ընդ ցերեկ,
Եկաւ ոստիկան իւր մարդիկներովն
Բռնեց Ոստանիկն տարաւ իրեն քով,
Շատ փընտռեցին գտան և ոչ ինչ
Ոչ ակունք, ոչ քար և ոչ ծանրը ինչ,
Այլ թուղթ և ցուցակք հաշուոց անպիտան
Եւ վեց հարիւր ալ ֆռանք գալլիքան :

Միայն ասոնք էր որ իր քով գըտան,
Զի այն ակունքներն ու մարգարիտներն
Որ բոլոր աշխարհ կըսէր թէ ունէր,
Ամէնքն ալ վատնած ցիր ու ցան ըրած
Մերկ ու գլուխ բաց Փարիզ մտած էր :

Ոստանիկն ի բանտ, ի մահ և կապան
Տէր, դու ազատէ, թէ ունիս հրաման :

Յետ քսան և ինն աւուրցըն լըրման
Կալան զիս ի դուռն բարձր արդարութեան,
Եհարց դատաւորն թէ « արդեօք իրաւ,
Գաղտնի մի նամակ առ Մարգարն տարար ».
Ո՛հ, ասացի ոչ, (թէպէտ և իրաւ ,)
Որով հաստատեց յանցանքս, անիրաւ.

(¹) Բըռատիյէ Ֆոտէրէ անուն անձը խմբագիր ժուռնալ տը Ֆռանս լրագրոյ և միջնորդ հարսանեաց Ոստանիկի :



Այսու կարծելով թէ գիտեմ շատ բան
Պէտք է չարչարել, մինչև խոստանամ :

## Ա. ԲԱՆՏՍ

Իսկոյն բարկութեամբ լեցուած անպիտան
Զեռքս շըղթայելու տուաւ խիստ հրաման.
Տանել դնել զիս ի բանտն Բեռմանան
Մինչև որ յայտնեմ թէ գիտեմ մի բան :

Ինչ որ ունէի վրայէս առին
Ժամացոյցս տասն ալ ֆռանք ծողուցին,
Տըւին կէս չոր հաց այն ալ մըգլոտած
Որչափ ջանացի բերնէս վար չգնաց :

## Ա. ԿՈՉՈՒՄՍ Ի ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Այս տեղ մէկ գիշեր մընացի միայն,
Հետևեալ օրը գրեցի մի նամակ,
Առ դատաւորն թէ չունիմ ես յանցանք.
Ի պատասխանի իմ այս գրութեան
Առաքեցին զիս ի բանտն Առողջութեան (¹) :

Մեր դատաւորին անունը Ժիւլ Ժօտէն
Կարծես Կերբերեայ ծընած էր ծոցէն,
Ամէն մէկ խօսքերն որ կը թուչէր բերնէն
Մէյ մէկ կիզիչ կայծ էր ինչ երկաթէն :

## Բ. ԲԱՆՏ

Իմ բանտս սոսկալի ի ցուրտ ձըմեռան
Ուր ոչ հուր և ոչ ծածկոց մերկութեան,
Անդ ոչ գութ սըրտի և խիղճ մարդկութեան,
Ոչ լոյս արեգին, ոչ աստղք փայփըլան :
Դրունք ու վանդակք, փականքն ընդ ամէն
Կարծես Հեփեստեայ հընոց ձուլուած էր,

(¹) Maison correctionnelle de la Santé 42 Rue de la Santé.

Գիշեր ու ցորեկ ողբով ու դողով
Անցանէր օրերս դառն կրսկիծներով :

Մաղթէի առ Տէր ջերմ աղաչանքով
Դատաւորիս սիրտն լընուլ իւր զրթով :
Գութ և խիղճ, հաւատք հանած իւր սրտէն
Կը դատէր անողորմ ի նրպաստ իրեն,
Թափած արցունքներս չկակղեցին իւր սիրտ
Տեսնել անմեղիս դատաստանըն ճիշդ :

Թէպէտ ունէի յանցանք մի յայտնի
Եւ այս յանցանքն էր խիստ իրաւացի,
Գաղտնի մի նամակ ղրկեց ինձ Մարգար
Թէ «Փութով հասցուր առ իմ սիրահար (¹)
«Թէ չրկայ այլ յոյս ինքզինքս փրկելու
«Եւ ոչ մի միջոց բանտէս ելլելու
«Բայց եթէ նամակս զոր կը ղրկեմ քեզ
«Պէտք է իւր տէրոջ շուտով հասցընես »:

Սոյն այս նամակներն ամէն միատեղ
Շուտով բաժնելով ըրի տէր ա տէր,
Բայց աղջկան նամակը հասաւ իւր եղբօր
Ցուսալով թէ նա կը հասցընէ փութով :

Բայց այս անպիտան մեզի հակառակ
Մեր դատաւորին կը յայտնէ մեր նամակն,
Թէ՝ «ահա այս ինչը յանձնեց ինձ այս գիրը
«Անկէ հասկցէք թէ ով է տուեր »:

Այս գրութիւններու պատասխանն ամէն
Եւ ընդ գրութեանց որք Տէր Գալուստէն, (²)

(¹) Անուն սիրուհւոյն Ոստանիկի էր Աննա-Մարիա տը Թոմասա ազնուական ընտանիքէ. ծնողքը մեռած, ունի մէկ եղբայր և երկու ալ հօր եղբայր, որոց հարստութիւնը 20 միլեոն ֆռանքի կը հասնի :

(²) Տէր Գալուստ Երուանդեան Վանեցի, քահանայութեան պաշտօնով Ռոմանիոյ Ֆրշան քաղաք ղրկուած, ուսկից Ոստանիկ հրաւիրած էր զանի ի Պուիսէլ, անդ պսակի խորհուրդ կատարելու համար :



Ըրի մի ծրրար դրրի ի զրրպանս
Տարայ յանձնեցի գաղտնի ի Մազաս :

Սոյն գաղտնի ծրարը այն տեղը կը բռնուի
Առ մեր դատաւորն փութով կը ղրկուի,
Ըսելով թէ «չար ծառայն Մարգարի
Զը գիտենք թէ որպէս անցուց ի բանտի» :

Ոստանիկ Մազաս, Ես յառողջութեան
Երկուքնուս ալ Տէր, դու կանգնէ պաշտպան :

Ցայս բանտն իմ երկրորդ յերեկոյ մթան
Հասանք սև կառքով առջև իւր դրան,
Հանեցին մեզ դուրս մտանք դուռն ի ներքս
Ահռելի ծառայք պատեցին չորս դեհս :
Նախ յոտից ցգլուխս զիս մերկացուցին
Նոյնպէս և միւս ընկերքս միասին,
Զափեցին հասակս թուեցին տարիքս
Հարցուցին անունս և իմ ծընողիս :

Յետոյ մեզ տարին դրրին ի տաք ջուր
Հագցուցին զմեզ մի զգեստ անմաքուր,
Որ էր խիստ թեթև չտոկայր դէմ ցըրտոյն
Եւ ոչ ծածկելու ունէր մի տրտուն :

Այս տեղէն հանին զմեզ մի սենեակ
Ուր ոչ փռուածք կար և ոչ ալ կրրակ,
Մինչև առաւօտ ատամունքս ամէն
Դողէս փըշրրուած բերանս լրցուեր են :

Օրուան պարէննիս էր մէկ քիլօ հաց
Այնչափ օթէկ է որ կըտրել չ՚կրնաս,
Առաւօտ ապուր մը այն հազիւ կէս թաս
Թէ ուզես չուզես պիտի կըշտանաս :

Հինգշաբթի օրեր մէյ մնալ կիրակի
Հազիւ կառնէինք հոտ արգանակի,

Սոյն իրիկուններ մէյ մէկ կտոր միս,
Զուտուիր, բայց պէտք է ուտել որ ապրիս :

Մընացած օրեր կաղամբով տաք ջուր
Ըստեպղին, շողգամ և կանանչ լախուր,
Երեկոյ բրինձ, լուբիայ, բաթաղէս
Անիւղ և անջուր կեր թէ կարող ես :

Թէպէտ ամէն բան կը գտնաս այստեղ
Բայց վայ քեզ, թէորդրամէ ես նեղ,
Չի պահապաններն անդրամներուն
Ամենասաստիկ կուտան նեղութիւն :

Իւրաքանչիւր օր հազիւ թէ մի ժամ
Կը հանէին դուրս իբրև զբօսանք,
Այս զբօսանքն ալ էր մի կերպ տանջանք
Որ մեզ կուտային խոժոռ պահապանք :

Ոչ կրնաս շուրջդ նայիլ որոնել
Եւ ոչ ընկերիդ հետ կրնաս խօսիլ,
Եթէ ուզես ալ խօսիլ կամ տեսնել
Ամուր պարիսպներ կանգնած են արգել :

Շապիկնիս կ'փոխուէր ութ օր միանգամ
Որ կը նմանէր մեռելի պատան,
Այնչափ մեծ, խոշոր, զոր պարտկելու
Մեծ ու լայն շալվար մը հարկ էր գըտնալու :

Եթէ հարցանէք ինչ կարասիք կար
Այդ սենեակին մէջ ուր տեղ որ մտար,
Կար մի երկաթեայ անկողին թեթև
Որ գամած էին սառ պատի ներքև,
Մի սեղան և մի կլոր նըստարան
Շըշթայով կապուած զինչ զող մարդասպան,
Ոչ տեղէն կը շարժի ոչ կրնաս շարժել
Եթէ շարժես ալ բանիկ մի չարժեր :
Մի ջուրի ման մի կերակուրի



Այնչափ ժանգոտ են մարդ չուզեր նայի ,
Հարկաւորն խիստ մօտդ, զրկէթ ոտքիդ տակ
Որ մարդոյս քըթին կուտար խիստ սարսափ,
Զըկայ մի դարան և ոչ մի տօլապ
Ուր պահել ուզես բան մի մաքրունակ :

Ո՜հ, այս ամենայն հասին իմ վերայ
Աղէտք տառապանք և վիշտք անխնայ,
Ոչ մէկ սիրտ զըթաց ոչ խիղճ մ'արթընցաւ
Գըտնել անմեղիս ցաւերու մի ճար :

Իմ ազգայիններս ամէն ձեռընթափ
Կուզեն զմեզ տեսնել դըժոխոցն յատակ
Երկինք. անմեղիս հաճէ տեսնել դատ
Եւ փութա փրկել ի յայս փորձանաց :

## Բ. ԿՈՉՈՒՄՍ Ի ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Ի յինն և տասան ամսոյ դեկտեմբեր
Ցանկարծ ի սենեակս հասաւ մի բանբեր,
Թէ՝ «արի կոչէ զքեզ դատաւորն
«Տալ պատասխանի յանցանացդ բոլոր »,
Իջայ շուարեալ մտի ի սև կասքն
Արկեալ զմաղթանս Անմահին առաջ,
Իջաք ի պալատն բարձր արդարութեան
Ուր մուծին խուց մի սաստիկ ջերմութեան :
Եհաս ժամանակ կոչեցին զմեզ
Իմ դատաւորիս ելանել յերես:

Հարցին ցիս «պատմեա թէ հրպէս, զիմբդ
Զքեզ Ոստանիկ յերկրէդ կոչեաց ասա. »
Պատմեցի զամեն մինչև ցըկէտն այն
Ուր խեղճ Ոստանիկն արկին ի զընտան,
Եւ ապա ետուն թոյլ դառնալ անդրէն
Ի բանտն իմ ուսկից ելեր եկեր եմ :

Հետևեալ գիշերն տեսայ մի երազ
Խիստ սարսափելի ո՜հ. մի թէ իրաւ,

Իբր թէ նամակ մի առ ամուսինս
Գրած՝ ըսեր եմ քանի մը շաբաթէն
Պիտի ըստանաս ըզվերջին թուղթն իմ : (¹)

Ընդ այս թէպէտ սիրտս եղաւ վեր ի վայր
Բայց ձեռքէս չէր գար ընելու մի ճար,
Ինքզինքս յանձնեցի առ Տէրն իմ արդար
Խնդրելով հանել ի բանտէս խաւար :

## Գ. ԿՈՉՈՒՄՆ Ի ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Հազար ութ հարիւր եօթանասներեք
Երեսուն և մէկ դեկտեմբերի վերջ,
Առաւօտեան ժամ ինը և կէսին
Եկաւ պահապանս ի դուռն իմ բանտին,
Ասաց «արի՝ եկ փութացիր, ճեպով
«Սև կառքն սպասէ քեզ ջուղտակ ձիով,
«Երթ առ դատաւորն տալու պատասխան
«Երթ և մի դառնալ կրկին յայս զընտան:

Ծընկուըներ ի դող սիրտս լի տխրութեամբ
Իջայ ըշտապաւ մըտի ի կառքն այն,
Կառավարըն խիստ, զօրքերն զրահաւոր,
Պատեր են չորս կողմս զինչ մարդասպան ոմն,

Կառքին մէջ միայն ինձ համար տեղ կար
Եւ այն ոչ ունի լոյս միայն խաւար,
Եւ մի երկաթեայ վանդակ հազիւ հազ
Փոքր ինչ շունչ տալու հով միայն խաղար:

Հասանք՝ ի պալատն բարձր արդարութեան
Նորէն զիս դրին ի խաւար զընտան,
Երեք ժամ ամբողջ խաշուեցաւ մարմինս
Փիչ էր մնացեր որ ելար հոգիս :

(¹) Սոյն նամակը գործոյս վերջը ընթերցիր :



Երեք ժամէն վերջ եկայ ես յատեան
Ուր էր դատաւորն և ընկերն դատման,
Ըրին շատ հարցմունք, տուի պատասխան
Զըկրցին գտնալ յիս ոչ մի սուտ բան :

Բայց այն կասկածն որ կայր իւր սրտին մէջ
Զ՝ներեց տակաւին տալ ցաւոցս մի վերջ,
Ուստի զիս նորէն ձեռքերս շղթայած,
Ղըրկեցին ի բանտս մուտ և տըխրամած :

Տէր, կամ առաջի քո բազկատարած
Աղօթեմ ջերմիկ սրտով իմ տրխրած.
Շարժէ Տէր, շարժէ քու զութդ իմ վերաս,
Եւ մի մատնէր զիս ի յայս չարչարանս,
Մի թէ անմեղաց չես դու Հայր զըթած :

## Դ. ԿՈՉՈՒՄՍ Ի ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Հազար ութ հարիւր եօթանասն և չորս
Վեց յունուարի օր յերեքշաբթուջ,
Եկաւ բանտապանս ասէ, թէ «կարծեմ
Ըզքեզ այսօր յատեան տի ղըրկեն» :

Անցաւ դոյզն վայրկեան նա դարձաւ եկաւ
«Ասաց փութացիր, էջ վայր ըշտապաւ»
Նորէն այն տրխուր կառքովն ու զօրքով
Ի դուռն պալատին հասանք մեք ճեպով :

Դարձեալ զմեզ ի խուցն այն ջերմ և խաւար
Փակեցին մինչև արեգն մըտաւ մայր :
Յանկարծ Ոստանիկ իմ դռնէս անցաւ
Ծըռեցայ ծակէն երես նայեցայ,
Մ՚խ մը քաշեցի անէծք ընդ նմին
Ոստանիկ, ըսի ոտերդ կոտրուին,
Բայց անամօթին երեսն երբ թըքնես,
Փառք կուտայ Տեառն թ՚իբր ցող էր սրսկեց :

Այն օրն ետ դարձանք առանց քննութեան
Զի ատեն ուշ էր անկաք ի մթթան,
Նորէն մեզ դրրին ի սեւուկ կառքն այն
Որով ձեռն ունայն դարձանք ի զընտան :

## Ե. ԿՈՉՈՒՄՍ Ի ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Հազար ութ հարիւր եօթանասն և չորս
Յունուարի ինն որ ուրբաթ էր օրն,
Ժամը ցերեկուան հազիւ մնտասան
Եկաւ դուռն բանտիս բացաւ պահապան :

Ասաց «քեզ համար թէ այսօր միայն
«Կառքըն ի պալատն զընայ արդարութեան,
«Իջիր ըշտապաւ մըտիր ի սև կառքն
«Մի կտրեր սըրտէդ քու Աստուծոյդ փառքն» :

Իջայ վարանեալ մրտայ ի սև կառքն
Սրրտէս սպացաւ, Աստուած իմ քեզ փառք,
Փառքին ետևէն չ՝գիտեմ թէ ինչպէս
Բոցախառն ախ մը սըլացաւ սըրտէս :

Երբ ես պարատին դրռնէն մրտայ ներս
Պահապան զորք մի բրոնեց իմ թևէս,
Սանդուղէն ի վեր զիս հանելուն պէս
Դըրաւ ի մութ խուց փակեց դուռն վրայէս :

Ամբողջ չորս ժամ կէս մնացի ի խաւար
Դուրսը տեսնելու ծակ մը միայն կար,
Ցանկարծ տեսայ որ անցաւ մարդ մի ծեր
Ուզեցի հարցընել թէ արդեօք ով էր :

Ասաց կը վաճառեմ ուտելիք պարէն
Թարմ հաց և պանիր, կարմիր զինիէն,
Եթէ կը սիրես մոռ որչափ կուզես
Դրրամ չեմ ուզեր, վրճարողն կը տեսնես :



Այս խօսակցութիւն ըրած միջոցիս
Խիստ ծանօթ մի ձայն դրպաւ ականջիս,
Անունըս կուտայ, խիստ լաւ շեշտելով
Թէ «առ ինչ կուզես, ես եմ վրճարողն» :

Ոստանիկն էր այս որ ի մի նոյն կարգ
Իւր չարչարանաց բրոներ էր օթեակ,
Ղրկեց հաց, պանիր, զինի չօքօլաթ,
Զորս ախորժակով կերայ մինչ ցյագ :

Ուզեցի գրել նամակ մ՝առ Մարգար
Ասելով թ՝ի գործդ գիտես, եմ արդար,
Բայց զայն հասցընելն անդ էր խիստ դըժուար
Դըժուարն ցըցուց ինձ սորա ելքն ու ճար :

Նամակին մէջը գրրեցի սա պէս
«Պարոն, չը գիտես որ անմեղ եմ ես,
Փառք, պատիւ, համբաւ և հանգստութիւն
Դու վայելեցիր, ինձ ինչ տրիտուր

Քանն ազատել զիս այս կապանրէն
Որուն մէջ ի զուր բերեր ձրգեր են,
Թըշուառ ընտանիքս ինձի կ՝սպասեն
Որոց սիրոյն ես ասա հալ ու մաշ եմ :»

Ծալեցի նամակն կանչեցի ծերուկ
Առի քիչ մը հաց հանեցի միջուկ,
Նամակն ղըրի մէջ միջուկն ի վերայ
Զոր ծերուկն անմեղ առ Մարգար տարաւ :

Մարգար չէր գիտեր թէ ի մէջ հացին
Նամակմ ներփակած իրեն խրրկեցի,
Բերանս դրան ծակէն ի դուրս հանեցի
«Հացին մէջ բան կայ», իրեն կանչեցի :

Ոստանիկ նամակս բացած կը կարդայ
Պատասխանն առ իս ղրկել կը փութայ,

Որուն մէջ կրսէ թէ քանի մ՚օրէն
Ըզքեզ ի բանտէդ դուրս պիտի հանեն :

Սոյն պատասխանը կապոյտ թուղթի մը մէջ
Շօքալաթի հետ փաթտած ինձ ղրրկեց,
Ներպարավաճառ ծերուկն այն անմեղ
Մեր մէջ կատարեալ եղաւ թղթաբեր :

Տէր մի արասցէ եթէ բանտապան
Տեսնէր իւր աչօք այս մեր ըրած բան
Երեքնիս մէկէն անշուշտ նոյն ժամայն
Դատապարտուէինք ի բանտ յաւիտեան :

Ժամ երեք կէսին պահապան բանտին
Եկաւ իջոյց զիս ի դուռն սրբահին,
Այն տեղ զօրական ձեռքս անցոյց շղթայն,
Ելանք ի սենեակն հարցաքննութեան :

Շատ երկար չ՚տևեց հարցաքննութիւն
Զի հարցուցածներն դարձեալ էր մի նոյն,
Բայց իւր սրտին մէջ պահուած դառն թոյն
Կուզէր որ թափէր իմ անմեղ գլխոյն :

Ո՜հ, այո՛, գլորեց խիստ մի ծանրը բառ
Որ բան զթոյն խիստ էր ըստոյգ հոգիառ,
Ասաց թէ հաղորդ (¹) ես դու այն չարեաց
Զորս Տէր Մարգարեանցն ունի ատ գործած :

Երբ իմ ականջիս դրպաւ այս խօսքը
Ոտքէս մինչ ցգլուխս անկայ ես ի դող,
Աչքերս լցուած դառն արտասուքով
Օգնութիւն կուզեմ, բայց չկայ հասնող :

Զը գիտեմ լեզուն խօսիլ բաւական
Իմ անմեղութիւնս հանել յերևան,

(¹) Complice.



Լալով խընդրեցի, ի սէր Աստուծոյ
Թէ չեմ ես հաղորդ նորա չար գործոց :

Այսչափ այս անգամ արարին ինձ հարց
Տրին ցՈստիկանն ձեռքերս շղթայած,
Մրտուցին սենեակ սենեակէն ի կառք,
Կառքէն իջայ ես իմ բանտիս ի բակ :

## ՆՈՐ ՏԱՐԻՆ ԲԱՆՏԻՍ ՄԷՋ

1 Յունվար 1874, օր երկուշաբթի.

Ինձի համար չէ նոր օր նոր տարին
Մինչդեռ փակուած կամ ի բանտ խաւարին,
Ինձի համար չէ արևն ու լուսին
Մինչդեռ կարօտ եմ ճրագի լոյսին :

Անցածն ալ նոր էր, ինձի ինչ բերաւ
Զէ՞ մի շատ փորձանք և գրկխոյս միշտ ցաւ,
Մարդիք միշտ նորին և նորա տեսքին
Խաբուած կը գլորին ի մէջ անդունդին :

Երէկուան կեանքն այսօր կը փնտռենք
Վաղուան չ՚գիտեմք թէ ինչ պիտի գտնեմք,
Այսպէս խաբուելով անկայուն յուսով
Կ՚սահին մեր օրերն սուտ փուտ բաներով :

Ա՜հ, չորս կողմս սև է պատեր տրխրամած
Երկինքն ալ ծածկեր իւր դէմքն յիմ աչաց,
Չորս կողմս լռութիւն երկաթով փակուած
Շրընչիւն բանտիս կուտայ արձագանգ :

Չկայ մի քաղցր դէմք որ առ իս ժըպտէ
Չկայ մի լեզու որ ընդիս խօսէ,
Թէ՝ «ահա մտանք նոր օր նոր տարի
Մաղթեմ քեզ համար շընորհաւոր լինի» :

Ա՜հ, եռեսուն և չորս մտոյ հասակիս
Արդեօք մընաց բան որ չեկաւ զըլխիս,
Ծարաւ մի կըսես անօթիութիւն,
Անտէր, անպաշտպան, դառն պանդըխտութիւն :

Արդեօք իմ Աննաս ու Գայիանէս
Ի՞նչպէս կատարեն նոր տարուան հանդէս,
Անշուշտ նոքա ալ ինձ պէս սրգաւոր
Սև սուգով տօնեն մեր այս ամանոր :

Երկինք, ալ հերիք այսքան սաստ, պատիժ
Դարձուր քու երեսդ ի մեղացս անթիւ,
Եւ այս նոր տարւոյս հետ նոր օր, նոր կեանք
Տուր, և արձակէ իմ բանտիս կապանք :

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

---

## ԱԻԵՏԻՍ ՔԵԶ, ԹՇՈՒԱՌ ԲԱՆՏԱՐԿԵԱԼ

## ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

1874. չորեքշաբթի. 9/21 յունուար.

Մինչ միայնիկ ի մէջ բանտիս ըզգնայի յուսահատ
Եկն բանտապանս եբաց ըզդուռն բանտին իմոյ տըխրամած,
Ասաց արի եկ էջ ի վայր կոչէ ըզքեզ դպրապետն
Թերևս ունի մի աւետիս ուրախարար տալու քեզ :

Ընդ այս բանըն բանտապահին աւետաւոր և զուարթ
Կարծես ի սիրտն իմ խըռովեալ նոր արեգակ մի ծագեաց,
Իջայ ես վայր կէս մի ուրախ բայց սիրտըս յոյժ բաբախէր,
Թէ աւետիսն զոր ետուն յիս մի թէ արդեօք իրաւ էր :

Մրտի սենեակն դպրապետին ուր էր դըպիրն և տեսուչ
Ողջունեցի բեկեալ սըրտիւ զերկոսին ևս վայելուչ,
Լուծեալ ծըրարըն նամակաց դըպիրն եցոյց ինձ մի թուղթ
Թէ ահա վաղն քոյդ դատաւորն ունի զքեզ տալ ի թոյլ :



Երբ իմ ականջս ազատութեան հասաւ այս մեղմ և զողտր ձայն
Անկայ ի ծունգ արտասուախառն աչքերս յերկինս բարձրացան,
Միով ձեռամբս դըպրապետին և միւսովըն Տեսչին
Կալայ՝ զձեռացն համբուրելով զգուեալ զինչ վարդ ի կուրծնիմ:

---

Օտարական, ել դու թշուառ բանտարկեալ
Ել ի բանտէդ, չունիս յանցանք և ոչ դաւ,
Զորեակ տասնեայ ե՛երեք աւուր քո ցաւերն
Բըժըշկուեցան այսօր զ՝էիր դու անմեղ :

Ել, արցունքներդ ու ջերմ մաղթանքդ առ Աստուած
Հասին փութով, ազատութեանդ եկաւ ձայն,
Ել այլ մի ևս յենուր յեղէգն ջախջախուտ
Որ չը բերես անթիւ ցաւեր խեղճ զըլխուդ :

Ե՛լ, ալ ամուր կաց ի հաւատս քո և կըրօն
Առանց որոյ չը փըրկի մարդ թև՝ ըզզօն,
Սիրեաց զքեզ Տէր վասըն այն ի փորձանս
Արկ, զի մի ևս մեղանչեսցես ի քո կեանս :

ՆՇԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ

---

9/21 դեկտ. 1873, Դ.
Ի բանտիս.

# Առ
# Անուսին իմ Անանա

*Սիրեցեալդ իմ Անանա.*

Կենաց եւ մահուանս մէջէն կը գրեմ Քեզ սոյն արտասուալից նամակս, որն որ երազիս մէջ խոստացայ թէ՝ երեք շաբաթէն վերջ կստանաս վերջին նամակս եւ ահա կը կատարուի այն չարագուշակ տխուր երազը :

Անանա՛, կարծես թէ երկուքնիս ալ նոյն սեւ աստղին տակը ծնած եմք, բայց քու աստղդ քիչ մը լուսաւոր է քան զիմ. զի դու հայրենեացդ ծոցին ու բարեկամացդ գրկին մէջ կը գտնուիս, բայց ես աստ բանտերու խորերը անգութ եւ անողոք մարդ ընուած գազանաց նիրաններուն մէջ :

Ես անմեղութեան զոհ եղայ, բայց դու կապրիս քու եւ իմ անդրանիկ վերջին եւ առաջին պտղովդ. այդ թող ըլլայ քեզ մխիթար :

Երկուքնիս ալ ծաղկի պէս դեռ չ'բացուած, արմատախիլ իրարմէ թառամեալ բաժնուեցանք. թէպէտ նպատակնիս այսպէս չէր, բայց նակատագրնիս այսպէս տխուր գրուած էր : Աշխարհ գիտէ այդ տեղ որ ես ազգիս սիրուն ամէն բան ուրացայ, տուն, տեղ, բարեկամ, ազգական, ա՜հ, եւ զքեզ միանգամայն :

Խաբեբայէ մը խաբուած այս տեղն եկայ, թերեւս բան մը շահիմ ապագաս բարւոքելու յուսով. բայց մնացած յոյսս որ կեանքս էր՝ ան ալ անոր հրդեհին մէջ վառուեցաւ, անմեղ էի եւ անմեղ զոհուեցայ:

Մնաս բարեա՛ւ, Գայիանէս զգուէ ու նովաւ մխիթարուէ զոր չտեսայ. յուսով եմ որ անդին պիտի տեսնուինք, եթէ դասաւորն այս կողմի դասաւորաց պէս անգութ չէ:

Վերջին համբոյր մը քեզ ու Գայիանէիս, մնասջիք բարեա՛ւ, Հայրենիք եւ դուք Բարեկամք զի մեռա՛ւ (¹)

ՆՇԱՆ ԱՒԵՏԻՍ ՇԻՐՎԱՆԵԱՆ

## ՎԵՐՋ

(¹) *Այն նամակը գրած միջոցիս արդարև սարսափելի վիճակի մէջ էի, այնպէս որ ինքնիրմէս ձեռք քաշած էի: Քառասուն և երեք օր բանտ մնացի, եթէ տասն օր ևս մնայի, անշուշտ արևէս պիտի զրկուէի. բայց փառք Աստուծոյ ազատեցայ և ողջ եմ;*



## ՎԵՐՋԱԲԱՆ

Գրքոյկս, որ իմ՝ Ոսանիկի երեսէն կրած չարչարանացս մի համառօտ նառը կրնայ համարուիլ, տակաւին նորա անցիցը պատմութեան ամբողջութիւնը չի կազմեր. զի Պազէնի դասատանը՝ որ գործոյն մեծութեամբ խիստ ընդարձակ դիրք մ'ունեցաւ, բաղդատմամբ գործոյս, Ոսանիկին չափ երկար չը տեւեց: Եթէ ճարտար գրիչ մը ասի իրեն նիւթ առած ճշմարիտ վէպ մը յօրինէր, արդարեւ խիստ նշանաւոր եւ շատ հետաքրքրական բան մը պիտի ըլլար:

Ոսանիկ, իւր գծած յատակագծին մէջ երբէք սխալած չէր, իւր կործանումն իւր խորհրդեան ոչ ումեք չհաղորդելէն ծնունդ առաւ. այս ալ իւր անձնապաստան եւ բնական ախոյժին կոթնած ըլլալէն յառաջ կուգար:

Ոսանիկ, թէպէտեւ աղքատ ընտանիքի մը զաւակ, բայց բաղդը իւր ճակտին վերայ հարստութիւն գրած էր (բայց ոչ այսպէս), եթէ զինքը առաջնորդող ոտից շաւղացը հետեւէր: Այս խոտորումը եղծեց իւր փայլուն ճակատագիրը, եւ այն նշանաւոր ծնունդը իբրեւ վիժած մը Փարիզու բանտից անկիւններուն մէջը նետուեցաւ, որով անպատուեց իւր անձը, վշտացուց իւր ազգը եւ թշուառացուց իւր հէգ հայրենակիցը որ յայն կը պարծէր:

Եթէ Աստուած տայ՝ Ոսանիկ ապրի այն բանտերուն մէջ, ելնելէն վերջը նոր աշխարհ մը պիտի տեսնայ, իւր անձնապաստան գաղափարները փոխելով՝ լուրջ շաւղի մը հետեւելու: Իւր

ճակտին վերայ եւ Գաղղիոյ ատենական արձանագրութեանց մէջ իրեն համար դրոշմուած այն տխուր վերտառութեան . . . . . .
Եղծուիլը միշտ կը մաղթէ ու բարեմաղթէ՝

*իւր հաւատարիմը*

**ՆԵՍԱՆ Ա. ՇԻՐՎԱՆԵԱՆ**

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A. Публичная Библиотека
7/II-1922
ԵՐԵՎԱՆ, Ереван
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տպագրութեան առանձնաշնորհութիւնն հեղինակին
վերապահուած է

Գին 1/4 Մեծից

«Ազգային գրադարան»
NL0347863

47984